ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018թ. մայիսի 27-ից 29-ը Իրանի Իսլամական Հանրապետություն
(ք. Թեհրան) գործուղման

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ
Հայկ Արզումանի Հարությունյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ
Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ
Իրանի Իսլամական Հանրապետություն /ք.Թեհրան /
2018թ. մայիսի 27-ից 29-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ
Իրանի գազի ազգային ընկերություն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ
Իրանի գազի ազգային ընկերության պաշտոնատար անձանց հետ գազի և էլեկտրաէներգետիկայի բնագավառում համագործակցության վերաբերյալ բանակցություններ վարելը

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ
Քննարկվել են 2018-2019թթ. Հայաստան առաքվող գազի քանակների ավելացման, գազ-էլեկտրաէներգիա փոխանակման գործող համաձայնագրի հեռանկարային փոփոխությունների, ինչպես նաև մի շարք այլ ծրագրերի (Հայաստանի տարածքով գազի տարանցում Վրաստան, գազ-էլեկտրաէներգիա փոխանակման գործարքի մեջ վրացական կողմի ներգրավում) հետ կապված հարցեր:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ
Հանդիպումներ են կայացել ԻԻՀ էներգետիկայի նախարարի տեղակալ Հոմայուն Հայերիի և նավթի նախարարի տեղակալ, Իրանի գազի ազգային ընկերության գլխավոր տնօրեն Համիդռեզա Արաղիի հետ:
Հանդիպման ժամանակ հայկական կողմի ներկայացված հարցադրումներն ընդհանուր առմամբ ընդունելի են համարվել և իրանական պաշտոնյաները խոստացել են անհրաժեշտ համաձայնեցումներից հետո ներկայացնել արծարծված խնդիրների լուծման մասին որոշումները:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼԻ Ժ/Պ **ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**